

**25 ՓՈՓՈՓՈՓ : 2014 ՓՈՓՈՓՈՓ :** ՓՈՓՈՓՈՓ ՝ ՓՈՓՈՓՈՓ ՝ ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓ ՝ ՓՈՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓՈՓ ՝  
 ՓՈՓ ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ ՝ ՓՈՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓՈՓ ՝ ՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓՈՓ, Փ ՓՈՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ  
 ՓՈՓՈՓՈՓՈՓ ՝ ՓՈՓՈՓՈՓՈՓ ՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓ ... ՓՈՓՈՓ :  
 ՓՈՓ ՝ ՓՈՓ ՝ ՓՈ ... ՓՈ ՓՈՓ ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ : ՓՈ ՓՈՓՈՓ -ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓ -ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓ,  
 ՓՈՓՈՓ -ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ : ՓՈՓՈՓՈՓ -ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓ -ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓ, ՓՈՓՈՓ -ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓ,  
 ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓՈՓՈՓՈՓ ՓՈՓՈՓՈՓ ՓՈՓՈՓ :

Ավանդական տոնահանդեսն այս անգամ հոբելյանական է... 301 տարեկան հանձարի պատվին այն անցկացվում է 100-րդ անգամ, ասել է թե՛ թբիլիսյան (ուր ծնվել, ապրել ու չորս լեզվով՝ վրացերեն, հայերեն, թուրքերեն, պարսկերեն ստեղծագործել է թբիլիսցի մեծ հայր, «ցիղի համա» լացող հայր) ու արտաթբիլիսյան քանի՛ ազգի սերունդ է նույն մեծ խոնարհումը բերում հայոց պաշտելի զավակին, իր պատմության փառքերից մեկին, իր անզուգական Սիրերզակին ու Պատգամախոսին:

Միջոցառման ավանդականությունն էլ, գեղեցկությունն էլ, մեկդարյա կյանքն էլ հենց ականա պատմության խորքերն են տանում մեզ, դեպի մայիսը 1914-ի...

...1914 թվականի մայիսի 15-ն է, հինգշաբթի, Համբարձման տոն, զարնանային զովաշունչ առավոտ, վարդերի բուրմունք՝ Սայաթ-Նովայի դեռևս չբացված հուշարձանի չորս դին: Բազմության ծո՛վ է... Ով ասես չկա՛՝ գրողներ, դերասաններ, հասարակական գործիչներ, բարձր դասարանների աշակերտներ՝ իրենց համազգեստներով, աշուղներ, հին Թիֆլիսի մոքալաք դարաչուխալ արհեստավորներ՝ իրենց համաքարական դրոշակներով, մարդկանց խիտ շարքեր՝ հայ, վրացի, ռուս, հրեա, հույն, թուրք, պարսիկ... Բոլորի կրծքերին սիրո ամենափայլուն հավատչյա-ծաղիկն է՝ կարմիր վարդը... Ահա եւ Սուրբ Գեւորգ եկեղեցու բակը... Նախագավիթում գուսան Հազիրն է իր դաստայով... Նվա՛գ է հոգեցունց, ե՛րգ է հուզաթաթավ.. Սայաթ-Նովայի մեղեդիներն են ծորում, փոթորկում սրտերը մարդոց... Հետո գալիս են հայ ու վրացի մեր մեծերը... Ահա նրանք՝ Հովհ.Թումանյա՛ն, Գեւորգ Բաշինջաղյա՛ն, Իոսեբ Գրիշաշվիլի, Իոսեբ Իմեղաշվիլի, Կոտե Մաղաշվիլի, Նինո եւ Իլիա Նակաշիճենե՛ր,... Ներսուն պատարագ է, որ մատուցում է պատարագիչ Հովհ. քահանա Ամիրխանյանը, իսկ օրվա խորհրդի առիթով քարոզ-ձառ է ասում Հովսեփ քահանա Աբուլյանը: Պատարագից հետո հոգեւորականությունը դուրս է գալիս եկեղեցուց եւ հանդիսավոր հոգեհանգիստ կատարում եկեղեցու հյուսիսային դռան շենին թաղված Սայաթ-Նովայի գերեզմանի վրա: Նորակառույց, հայկական ոճով քանդակված սպիտակ մարմարե մահարձանը՝մեջտեղում սեւ մարմարե տախտակով, շողշողում է օրվա փայլի տակ: Սեւ մարմարի վրա ոսկեգույն տառերով փորագրված են բանաստեղծի հայտնի տողերը՝ Ամեն մարթ չի կանա խմի՛ իմ ջուրըն ուրիշ ջրերն է, Ամեն մարթ չի կանա կարթա՛ իմ գիրըն ուրիշ գրերն է Բունիաթս ավագ չիմանաս, քարափե, քարուկրեն է...

Ահա եւ սկսվում է հանդիսությունը... Եվ Առաջին Վարդատոնն այս վարդաստան-երգաստան-մարդաստան հիշեցնող խնկաբույր ու վարդաբույր մթնոլորտում բացում եւ Առաջին մեծ խոսքն է ասում Ամենայն Հայոց Թումանյանը... Հետո ուրիշ ձառեր են հնչում, բանաստեղծություններ են ընթերցվում տարբեր լեզուներով, հեռագրեր են կարդացվում, ու մեջընդմեջ նվագում է աշուղ Հազիրի դաստան... Խոսում են ոչ միայն Սայաթ-Նովայի ու նրա պոեզիայի, այլ նաեւ՝ անդրկովկասյան ժողովուրդների եւ հատկապես հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության, նրանց պատմական

անցյալի եւ է՛լ ավելի գեղեցիկ գալիքի մասին: Ի.Գրիշաշվիլին, Ի.Իմեդաշվիլին պահանջում են Սայաթ-Նովայի վրացերեն բանաստեղծությունների հրատարակություն՝ առանձին գրքով...

...100 տարի է անցել, բայց թարմ է հիշողությունը... Եվ թարմ է, քանզի սրտի ու սիրո, նվիրումի ու մեծարումի, հպարտության ու գնահատանքի հիշողություն է այն... Ու հենց դա էլ ստիպում է օրնօրի, տարեցտարի ավելի ու ավելի խաստրեն՝ շքեղաշուք, հյուրերով ու տեղացիներով, միով բանիվ միասնական երկրպագությամբ անցկացնել ժողովրդի կողմից այնքան սիրված եւ ընդունված տոնը, որ չի ունենա վախճան, քանի դեռ կա Թբիլիսին... Քանի դեռ կա սերը... Իսկ սերը անմեռանալի է... Դարեր էլ անցնեն: Սերը ջնջում է ժամանակ, սահման, տարածություն, պատնեշ... Սերը բացում է ճամփաները բոլոր ու իր գիրկը բերում բոլորին... Բոլոր նրանց, ով լավ գիտե սիրո գինն ու արժեքը... Ու այս անգամ էլ ահա բերեց իր գիրկը հավաքեց բոլորին քանքարը Սայաթ-Նովայի, նրա՝ սիրո, նրա՝ մոգական խոսքի ուժը:

Ուրիշ սերունդ ու մարդիկ կազմակերպեցին, բնական է, այս անգամ Վարդատոնը Թբիլիսիի քաղաքապետարանը, «Հայարտունը», Վրաստանում ՀՀ դեսպանությունը, գրողների «Վերնատուն» միությունը, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը, Թբիլիսիի Հայոց թատրոնը: Ուրիշ կազմակերպություններ օժանդակեցին իրագործելու միջոցառումը՝ Հայաստանի Սփյուռքի, Մշակույթի նախարարությունները, «Հայարտան» հոգաբարձու խորհուրդը, գործարարներ նաեւ: Նրանք նախ պատարագին մասնակցեցին, որ Սուրբ Էջմիածին եկեղեցում (Սուրբ Գեւորգ եկեղեցին վերանորոգվում է) մատուցվեց, ապա եւ տոնահանդեսին՝ հոգեւոր դասը՝ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի գլխավորությամբ, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Վրաստանում Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Վահագն Աֆյանը, Բաթումիում ՀՀ հյուպատոս Արամ Գրիգորյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրջյանը, Թբիլիսիի պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, բանաստեղծ, ՎԳՄ փոխնախագահ Բաղաթեր Արաբուլին, հայաստանյան պատվիրակության անդամները՝ Մովսես Մանուկյանը, բանաստեղծներ Գագիկ Դավթյանը, Վառլեն Ալեքսանյանը, Շանթը ...

Ու Գորգասալի հրապարակը, հենց Սայաթ-Նովայի հուշակոթողի (բացվել է 2008 թվականին)՝ մոտ տեղադրված բացօթյա բեմահարթակը դարձավ մի հոգեբուխ խոնարհում Սայաթ-Նովային...

Ու խո՛սքը հնչեց նախ... Եվ այդպես էլ պիտի լիներ, քանզի Սայաթ-Նովայի իսկ համոզմամբ՝ «Մարթ իր խոսկով կու ճանաչվի, զուգե Շահի վագիր շինին»... Եվ հետո՝ ի սկզբան էր Բանը... Հայ ու վրացի գրողները իրենց ելույթներում նորովի պատվանդանի վրա կանգնեցրին անմահ Փիլիսոփային ու Պատգամախոսին, Աստվածային Սիրո երգչին... Խոսք առան Վրաստանի ու Հայաստանի գրողների միության նախագահներ՝ Մաղվալա Գոնաշվիլին ու էդվարդ Միլիտոնյանը, «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնիսյանը, թարգմանիչ Գիվի Շահնագարը, վրացի բանաստեղծ Բադրի Քուրթաթելաձեն, Անահիտ Բոստանջյանը:

Ապա եւ Վարդատոնը հայերեն ու վրացերեն լեզուներով վարող, «Հայարտան» տնօրեն Լեւոն Զիդիյանն ու երգչուհի Աննա Պողոսովան բեմահարթակ հրավիրեցին միջոցառման գեղարվեստական մասի մասնակիցներին... Տոնահանդեսի այդ մասը բացեց վերջին մի քանի տարիներին «Վարդատուն» մասնակցող, Հայաստանի Հանրապետության ռադիոյի «Սայաթ-Նովայի» անվան պետական վաստակավոր համույթը՝ պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ: Եվ նորից սիրո եւ բարեկամության հիմնը թելածեց Թբիլիսիի կոլորիտային Մեյդանում, վերջստին սայաթնովյան երգն ու տաղը տարածվեց հայերեն եւ

վրացերեն՝ Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասանների, անհատ երգիչների ու ասմունքողների, «Քսովրելեբի» համույթի, Հայաստանի եւ Վրաստանի տարբեր վայրերից ժամանած կատարողների շնորհիվ:

Ու ծավալվեց հորձանքը վարար՝ սայաթնովյան հրաշք մեղեդիների՝ երգով նվագով... ասմունքով պարով, դուդուկով, դիլիով, քամանչով... Ու ժողովուրդը հա՛ ծափահարեց նրան՝ սրտով, երգով, պարով, ձեռք ու ոտքով... Ժողովուրդը... խա՛լխը, որի համար, ինչպես ինքն է խոստովանել, «խալխի համար կինք մաշեցի, ջան տըվի»:

Ու Սայաթ-Նովա՝ խաս Անհատի էությանը հարիր էլ, ինչպես ինքն է ասում, «Սայաթին խաս, Նովային խաս, ցեղն խաս», 100-րդ Վարդատոնն էլ խաս կայացավ՝ «Խաս Արարչեն խաս պատկիրըն խաս տըրվեց»... Ու դեռ քանի՛ հարյուրներ պիտի կայանա այն... Թող որ, ինչպես մեծ Բանաստեղծն է ասել, «ուրիշ գարուններով, ուրիշ վարդերով, ուրիշ բաղերով ու բլբուլներով-ուրիշ յարերով ու սիրեկաններով» բայց պիտի կայանա... Ու կկայանա՛... Քանզի Սայաթ-Նովան, ճշմարիտ Բանաստեղծ է ու ճշմարիտի քարոզիչ, իսկ իր իսկ խոսքերով ասած՝ Կրակ էլ տաս, ճշմարիտին մահ չըկա...

□□□□□□ □□□□□□□□□□